

24
ՀՈՒՆԻՍԻ
2022



ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ
ՊԱԼԱՏԻ 2021Թ. ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՂՈՐԴՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2021Թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռիսկերի վրա հիմնված հաշվեքննությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն



Հաշվեքննիչ պալատը (այսուհետ՝ ՀՊ) 2021 թվականի գործունեության ծրագրի շրջանակներում իրականացրել է **94** հաշվեքննություն, որից **72-ը՝** 2021 թվականի պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննություններ, **19-ը՝** ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ հաստատված հաշվեքննություններ, իսկ **3-ը՝** միջազգային պայմանագրերով նախատեսված համատեղ միջոցառումների շրջանակներում:

Սույն տեղեկանքում հիմնականում ներկայացված է **ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ իրականացված հաշվեքննությունների** մասին տեղեկատվություն:

2021 թվականի ընթացքում ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ նախատեսված **30 հաշվեքննությունից** ավարտվել է 19-ը, իսկ մնացած 11-ը դեռևս ընթացքում է և **տեղափոխվել է 2022թ.** (այդ թվում՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության ենթակայության որոշակի ուղղությունների հաշվեքննությունները):

Հաշվեքննողները ընթացքում կիրառել են հաշվեքննության **3 տեսակները՝** տարբեր համակցություններով՝

- **Ֆինանսական,**
- **համապատասխանության,**
- **կադրորոդականի:**

Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների շրջանակներում 2 հաշվեքննության մասով տրամադրվել է «դրական եզրահանգում» կարծիք, 4-ի մասով՝ «ոչ լիարժեք եզրահանգում», իսկ 1-ի մասով՝ «բացասական եզրահանգում» կարծիք (տե՛ս Աղյուսակը):

**Աղյուսակ. Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների
շրջանակներում տրամադրված կարծիքները**

Հ/Հ	Կարծիք	Հաշվեքննություն
1.	Դրական եզրահանգում	1. Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող վերելակների հիմնանորոգման ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն 2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն (ֆինանսական հաշվեքննության մասով)
2.	Ոչ լիարժեք եզրահանգում	1. Երևանի քաղաքապետարանի «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ ֆինանսատնտեսական գործունեության ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն 2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն (համապատասխանության հաշվեքննության մասով) 3. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործընթացի համապատասխանության և կատարողականի հաշվեքննություն 4. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման վարկային և դրամաշնորհային ծրագրերի նկատմամբ համապատասխանության հաշվեքննություն
3.	Բացասական եզրահանգում	ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի ձեռքբերման նկատմամբ համապատասխանության հաշվեքննություն

Կատարողականի հաշվեքննության հաշվետվություններում արձանագրվել են՝

• **տնտեսման** սկզբունքի չպահպանման՝ **6** դեպք,

• **օգտավետության** (նպատակային արդյունավետություն) սկզբունքի չպահպանման՝ **10** դեպք,

• **արդյունավետության** (ծախսային արդյունավետություն) սկզբունքի չպահպանման՝ **9** դեպք:

Բացահայտված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների և ռիսկեր պարունակող դեպքերի վերացման ու կանխարգելման, ինչպես նաև գործընթացների արդյունավետության բարձրացման համար ՀՊ կողմից ներկայացվել է **114 առաջարկություն**, որից՝

- 47-ը՝ համակարգին միտված,
- 23-ը՝ արդյունքին միտված,
- 44-ը՝ խնդիրների բացահայտմանը/լուծմանը միտված:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է պետական գաղտնիք պարունակող երկու հաշվեքննություն՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում (ՀՀ տարածքում տեղակայված ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների պահպանության նկատմամբ) և ՀՀ պաշտպանության նախարարության գնումների գործընթացի նկատմամբ, որոնց արդյունքները գաղտնիության հիմքով չեն հրապարակվել:

Հաշվեքննությունների ընթացքում բացահայտվել են մի շարք ռիսկեր: Մասնավորապես՝

- կատարվել են գնումներ, որոնք փաստաթղթերով հիմնավորված չեն եղել և/կամ չեն համապատասխանել գնումների գործընթացի նկատմամբ օրենքով սահմանված պահանջներին,

- հաշվեքննության ենթարկված կազմակերպությունները պայմանագրեր են կնքել այնպիսի անձանց կամ կազմակերպությունների հետ, որոնք չեն բավարարել գնումների կազմակերպման մրցույթով հայտարարված պահանջներին,

- որոշ դեպքերում ծախսերը գնահատվել են որպես ցածր արդյունավետ, իսկ մյուսներում՝ ոչ արդյունավետ,

- որոշ դեպքերում ծախսերը չեն հիմնավորվել համապատասխան փաստաթղթերով,

- հաշվեքննության ենթարկված որոշ կազմակերպություններ իրենց տրամադրված պետական ֆինանսական աջակցության միջոցները չեն օգտագործել նախապես սահմանված նպատակով,

- որոշ դեպքերում վճարվել են աշխատավարձեր և պարգևավճարներ, որոնք հիմնավորված չեն եղել անհրաժեշտ փաստաթղթերով:

ՀՊ-ի որոշմամբ 2021թ. հաշվեքննությունների արդյունքները թվով 8 դեպքերի մասով ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն (տե՛ս Հավելվածը): Եվս 4 հաշվեքննությունների փաթեթները ՀՊ-ն տրամադրել է ՀՀ գլխավոր դատախազությանը՝ իր իսկ պահանջով:

ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկված նյութերի շրջանակներում 4 ուղղություններով արդեն իսկ հարուցվել են քրեական գործեր (դրանցից 3-ի մասով պետությանը պատճառված վնասի նախնական չափն արդեն գնահատվել է՝ ընդհանուր առմամբ ավելի քան 10.6 մլրդ դրամ), կատարվում է նախաքննություն, մյուս ուղղություններով ուսումնասիրությունները շարունակվում են:

Նախորդ տարիների հաշվեքննություններով հաշվետու տարում հարուցվել են ևս 4 քրեական գործեր, որոնց մասով պետությանը պատճառված վնասի չափը կազմում է մոտ 381.5 մլն դրամ, կատարվում է նախաքննություն:

Ստորև ներկայացված են 2021 թվականին իրականացված ռիսկերի վրա հիմնված հաշվեքննությունների առավել ուշագրավ արդյունքները:

**Էկոնոմիկայի նախարարության կողմից անասնաբուժության մեջ
կիրառվող պատվաստանյութերի ձեռքբերման նկատմամբ
համապատասխանության հաշվեքննություն**

*Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2020թ. հունվարի 1-ից մինչև
2020թ. դեկտեմբերի 31-ը:*

Հաշվեքննության առարկան էՆ կողմից անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի ձեռքբերման գործընթացն է:

Հաշվեքննության նպատակն էր ստուգել էՆ կողմից անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի («Ծաղիկ» և «Դաբադ») ձեռքբերման գործընթացի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Ուշադրության են արժանի համապատասխանության հաշվեքննությունների մեթոդաբանությամբ սահմանված սկզբունքների չպահպանման հետևյալ դեպքերը.

Անհամապատասխանություն

- «Ծաղիկ» պատվաստանյութի գնման ընթացակարգի շրջանակներում կնքված պայմանագրի մասով պատվաստանյութերի ձեռքբերման գինը 54,282.75 հազ. դրամով գերազանցել է գնման հայտով սահմանված ֆինանսական միջոցները:

- Արձանագրվել են անհամապատասխանություններ՝ կապված պատվաստանյութերի ձեռքբերման գնի հետ (գնային առաջարկի գումարը ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի հետ միասին), որը գերազանցել է գնման

հայտով սահմանված ֆինանսական միջոցները, ինչի պատճառով մրցույթը պետք է համարվեր չկայացած և չկնքվեր ապրանքների ձեռքբերման պայմանագիր: Այնուամենայնիվ, մրցույթը կայացել է:

Խեղաթյուրում

• Բանկային երաշխիքների ստացման հետ կապված հսկողական գործընթացների թերացումները հանգեցրել են խեղաթյուրման՝ 267,000.00 հազ. դրամ գումարի չափով, որի արդյունքում ՀՀ պետական բյուջե չեն մուտքագրվել բանկային երաշխիքներով նախատեսված ֆինանսական միջոցները:

Հաշվեքննության արդյունքում տրամադրվել է **«բացասական կարծիք»**, իսկ հաշվեքննության արդյունքներն **ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն:**

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) պետական գույքի կառավարման կոմիտեի (ՊԳԿԿ) կողմից պետական գույքի կառավարման հետ կապված հարաբերությունների իրականացման կազմակերպված գործընթացի նկատմամբ կատարողականի հաշվեքննություն

Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2018թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը:

Հաշվեքննության առարկան ՊԳԿԿ կողմից պետական գույքի կառավարման հետ կապված հարաբերությունների իրականացման շրջանակներում կազմակերպված գործընթացն է:

Հաշվեքննության հիմնական նպատակն էր՝ պարզել, թե արդյո՞ք ՊԳԿԿ-ում ձևավորված է արդյունավետ հսկողական համակարգ, որը կարող է ապահովել պետական գույքի կառավարման պատշաճ մակարդակ:

Ուշադրության են արժանի կատարողականի հաշվեքննությունների մեթոդաբանությամբ սահմանված սկզբունքների չպահպանման հետևյալ դեպքերը.

Նպատակային արդյունավետության սկզբունքի չպահպանում

• Պետական գույքի կառավարման ծրագրով 2018-2020թթ. նախատեսված էր օտարել 41 անվանում անշարժ գույք, մինչդեռ նշված ժամանակահատվածում օտարվել է 63 անվանում անշարժ գույք:

• Արձանագրվել են դեպքեր, երբ անշարժ գույքն օտարվել է գնահատված շուկայական արժեքից ցածր գնով: Մասնավորապես, օրինակ՝ 9,562.8 քմ մակերեսով շենք-շինությունը և 12,510 քմ հողամասը օտարվել է գնահատված շուկայական արժեքից 492,244.0 հազ. դրամով պակաս գնով:

• 2018-2020թթ. ընթացքում տարածքների անհատույց օգտագործման իրավունքով տրամադրման գործընթացում արձանագրվել է ներդրումային պարտավորությունների մասնակի կատարման երկու դեպք. ՍՊԸ-ի կողմից նախատեսված 500 աշխատատեղի փոխարեն ստեղծվել է 26-ը, իսկ մեկ այլ դեպքում չի կատարվել պայմանագրով սահմանված 118,346.2 հազ. դրամի ներդրում:

Ծախսային արդյունավետության սկզբունքի չպահպանում

• Տարբեր գործարքներով (օտարման, վարձակալության, անհատույց օգտագործման իրավունքով հանձնման) պետական բյուջեի եկամուտները չեն ավելացել մոտ 419,234.5 հազ. դրամով:

• Երկու ընկերության մասով («Հայփոստ» ՓԲԸ, «Օպերա-Քլաբ» ՍՊԸ) վարձավճարի վերահաշվարկ չի իրականացվել, որի արդյունքում պետական բյուջե չի մուտքագրվել 214,645.0 հազ. դրամ գումար:

Համաձայն հաշվեքննության համառոտ եզրակացության՝ ***չեն պահպանվել ծախսային և նպատակային արդյունավետության սկզբունքները***, իսկ 2018-2020թթ. ընթացքում օտարված անշարժ գույքի վերավաճառքի վերաբերյալ հաշվեքննությանը արձանագրված փաստերն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն:

Առողջապահության նախարարության (ԱՆ) կողմից նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19) պայմանավորված բյուջետային ծախսերի իրականացման նկատմամբ կատարողականի հաշվեքննություն

*Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ առողջապահության նախարարություն:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը:*

Հաշվեքննության առարկան ՀՀ ԱՍՀՆ համակարգում նոր կորոնավիրուսային համավարակով պայմանավորված բյուջետային ծախսերի իրականացումն է:

Համավարակի կանխարգելման, վերահսկման, բուժման և այլ համալիր միջոցառումների իրականացման նպատակով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից 2020 թվականին հատկացվել է 26,491,923.9 հազ. դրամ:

Ընթացիկ հսկողական և հաշվետվողական համակարգերի ոչ ամբողջական ներդրման, որոշ դեպքերում նաև դրանց իսպառ բացակայության հետևանքով, հատկացված ֆինանսական միջոցները նպատակային և ծախսարդյունավետ ձևով չեն օգտագործվել:

Ուշադրության են արժանի կատարողականի հաշվեքննությունների մեթոդաբանությամբ սահմանված սկզբունքների չպահպանման հետևյալ դեպքերը.

Նպատակային արդյունավետության սկզբունքի չպահպանում

- 2020թ. ԱՆ-ը չի ունեցել ռազմավարական գործողությունների և համաճարակների կառավարման պլան, ինչպես նաև չի ունեցել արտակարգ իրավիճակներում ծավալվող միջոցառումների ծրագիր: Չի իրականացվել հիվանդության կանխարգելման՝ համաճարակի առանձնահատկությունները հաշվի առնող ռազմավարական գործողությունների պլանավորման կամ դրան համարժեք աշխատանք:

- 1,300-ից ավելի դեպքերում (ընդամենը 26 մլն դրամ արժեքով) համակարգչային տոմոգրաֆիայի հայտերը համակարգ մուտքագրվել են առանց դեպքի կողը նշելու, ինչը հնարավորություն չի տվել նույնականացնելու՝ արդյո՞ք տոմոգրաֆիա անցած բոլոր անձինք եղել են նոր կորոնավիրուսային հիվանդության բուժառուներ: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ իրականացված հետազոտությունը «ԱՐՄԵԴ» համակարգ մուտքագրվել է մեկից ավելի անգամ, և դրա դիմաց կատարվել է բազմակի վճարում:

- Հիվանդության կանխարգելման և բուժման նպատակով հատկացված 3,396.9 մլն դրամ միջոցներն օգտագործվել են ԱՆ-ի և նախարարության համակարգի կազմակերպությունների աշխատակիցներին աշխատավարձ ու պարգևավճար վճարելու, այդ կազմակերպություններում շինարարություն իրականացնելու, դրանց նյութատեխնիկական բազան համալրելու նպատակով:

Ծախսային արդյունավետության սկզբունքի չպահպանում

- 7 բժշկական կառույցների հատկացվել է 148,248.0 հազ. դրամ պարգևավճար, այն դեպքում, երբ դրանք որևէ իրավական ակտով չեն համարվել

համապատասխան ծառայություններ իրականացնողներ:

- Վերապրոֆիլավորված 3 բժշկական կենտրոնների կողմից ԱՆ ներկայացված փաստացի կատարված աշխատանքի վարձատրության ծախսերն ավելի քիչ են եղել, քան այդ նպատակով ԱՆ կողմից կատարված փոխհատուցումը: Արդյունքում ավելի է վճարվել 152.2 մլն դրամ:

- Արձանագրվել են տարբերություններ (որոշ դեպքերում՝ գրեթե կրկնակի) վերապրոֆիլավորված և դեպքով (քեյս) ֆինանսավորվող բժշկական կենտրոնների միավոր ծախսերի միջև:

- Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ԱՆ-ն չի պահպանել գնումների ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջները, որի հետևանքով առաջացել են մի շարք անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ: Մասնավորապես.

- o 2020թ. սեպտեմբերի 11-ից 27-ն ընկած ժամանակահատվածում հանրապետությունում սահմանված չի եղել ո՛չ արտակարգ իրավիճակ և ո՛չ էլ ռազմական դրություն, սակայն բոլոր գնումներն այդ ժամանակահատվածում իրականացվել են մեկ անձից գնման միջոցով:
- o 2020թ. սեպտեմբերի 27-ից հայտարարված ռազմական դրության ընթացքում գնումները կարող էին իրականացվել մեկ անձից, եթե միայն մատակարարվող ապրանքների դեպքում դադարել է մատակարարումը, և պահուստներում բացակայության հետևանքով առաջացել է հրատապ համարվող կարիք: Սակայն, ԱՆ-ն, չպահպանելով այդ օրենսդրական պահանջը, նույնիսկ իր տնօրինության տակ գտնվող պահեստներում ապրանքների առկայության պարագայում, շարունակել է բոլոր գնումները իրականացնել մեկ անձից գնման միջոցով:
- o ԱՆ-ն ամբողջությամբ օգտվել է ՀՀ կառավարության որոշմամբ իրեն ընձեռված հնարավորությունից՝ մեկ անձից իրականացվող գնումների դեպքում բոլոր գնումներն իրականացնելու առանց որևէ փաստաթղթավորման և կատարելու վճարումներ՝ վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի բացակայությամբ: Հատկանշական է, որ կառավարության որոշմամբ սահմանվել է, որ որոշման պահանջները տարածվում են 2020թ. հունվարի 25-ից հետո ծագած գործարքների վրա, մինչդեռ ՀՀ-ում նոր կորոնավիրուսային համավարակի առաջին դեպքը արձանագրվել է 2020թ. մարտի 1-ին, իսկ արտակարգ դրություն հաստատվել է մարտի 16-ից:

- o ԱՆ կողմից պատշաճ կերպով չի իրականացվել պահեստի մուտքերի և ելքերի շրջանառության հաշվառումը: Մասնավորապես, ըստ տրամադրված տեղեկատվության՝ 9,889,072.0 հազ. դրամ գումարի կատարված ձեռքբերումներից պահեստ մուտքագրվել է 8,347,468.6 հազ. դրամի ձեռքբերումը, իսկ 1,541,603.5 հազ. դրամ ձեռքբերված ապրանքներ, աշխատանքներ կամ ծառայություններ ԱՆ-ի կողմից չեն հաշվառվել:

• ԱՆ «Դեղերի և բժշկական պարագաների ապահովման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և ԱՆ-ի կողմից նոր կորոնավիրուսային համավարակի շրջանակներում վարվող պահեստների շարժերի համադրման արդյունքում արձանագրվել է 6,990,719.6 հազ. դրամի անհամապատասխանություն: ՀՊ-ն եզրակացնում է, որ ԱՆ-ը և ՊՈԱԿ-ը պատշաճ հաշվապահական հաշվառում չեն վարել:

Համաձայն հաշվեքննության համառոտ եզրակացության՝ **չեն պահպանվել ծախսային և նպատակային արդյունավետության սկզբունքները:**

ՏԿԵՆ՝ դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման վարկային և դրամաշնորհային ծրագրերի նկատմամբ համապատասխանության հաշվեքննություն

Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2017թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը:

Հաշվեքննության առարկան Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏՀՀ) կողմից, Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող՝ դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման վարկային և դրամաշնորհային ծրագրերն են:

Ուշադրության են արժանի համապատասխանության հաշվեքննությունների մեթոդաբանությամբ սահմանված սկզբունքների չպահպանման հետևյալ դեպքերը.

Անհամապատասխանություն

- 118,870.6 հազ. դրամի շինարարական աշխատանքներ կատարվել են պայմանագրի և նախագծի պահանջների շեղումներով:

- Կատարողական հաշվետվություններում հաշվարկված շինարարական

աշխատանքների ծավալները գերազանցում են փաստացի կատարված աշխատանքների ծավալները (ընդհանուր գումարով՝ 35,733.9 հազ. դրամի չափով):

- Բոլոր օբյեկտների նախագծերը փորձաքննության են ներկայացվել առանց նախահաշվային փաստաթղթերի: Մինչդեռ, համաձայն Կառավարության որոշմամբ հաստատված կարգի՝ պետական և համայնքի բյուջեների (ներառյալ՝ վարկային և դրամաշնորհային միջոցները) հաշվին կամ դրանց ներգրավմամբ իրականացվող ճարտարապետաշինարարական օբյեկտների նախագծերը փորձաքննության են ներկայացվում նախահաշվային փաստաթղթերի ներառմամբ:

- Նախագծման և հեղինակային հսկողության 21 պայմանագրերով աշխատանքները սահմանված ժամկետում չեն կատարվել: Դրանցից 12-ի ժամկետները ավարտվել են և չեն երկարաձգվել, լուծվել է ընդամենը մեկ պայմանագիր (ընդ որում՝ դրա կատարման ժամկետը դեռ ավարտված չի եղել):

- Նախագծման և հեղինակային հսկողության ավարտված 4 նախագծերով փաստացի աշխատող չհանդիսացող փորձագետների համար ավելի է վճարվել 33,695.3 հազ. դրամ, իսկ չավարտված թվով 22 նախագծերով փաստացի աշխատող չհանդիսացող փորձագետների համար նախատեսված 113,237.0 հազ. դրամ ծախսը ենթակա է հանման:

- Չնայած այն բանին, որ նախագծերի փորձաքննության համար լիցենզավորված ընկերության հետ նախապես կնքվել էր 2 պայմանագիր (13,530.0 հազ. դրամ ընդհանուր գումարով), այնուամենայնիվ, ավելի ուշ միևնույն ծառայությունների մատուցման համար 7 ֆիզիկական անձանց հետ կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագրեր 37,284.3 հազ. դրամ ընդհանուր գումարով: Փաստորեն, ըստ էության, խորհրդատուների այդ խումբը կատարել է նույն աշխատանքը (ընդ որում, նշված անձինք չեն ունեցել համապատասխան լիցենզիա):

Հաշվեքննության արդյունքում տրամադրվել է **«ոչ լիարժեք եզրահանգում»** կարծիք:

Էկոնոմիկայի նախարարության (ԷՆ) կողմից նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19) պայմանավորված բյուջետային ծախսերի իրականացման նկատմամբ կատարողականի հաշվեքննություն

*Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը:*

Հաշվեքննության առարկան ԷՆ համակարգում նոր կորոնավիրուսային համավարակով պայմանավորված բյուջետային ծախսերի իրականացումն է:

Համավարակի հետևանքների մեղմման պետական միջոցառումներից երկուսի իրականացումը վերապահվել է ՀՀ ԷՆ-ին (դրանցից առաջինի իրականացման համար պետական բյուջեի միջոցներից կատարվել է 4.6 մլրդ դրամի, իսկ երկրորդի համար՝ 2.3 մլրդ դրամի ծախս):

Ուշադրության են արժանի կատարողականի հաշվեքննությունների մեթոդաբանությամբ սահմանված սկզբունքների չպահպանման հետևյալ դեպքերը.

Տնտեսման սկզբունքի չպահպանում

• Մեկուսացված անձանց սննդի ապահովման համար ԷՆ-ի կողմից պատվիրվել է նախաճաշից (գները՝ 500-ից 1800 դրամ) ավելի քան 100,000 հատով և ընթրիքից (գները՝ 500-ից 1800 դրամ) ավելի քան 50,000 հատով ավելի սննդի տրամադրում, որի անհրաժեշտությունը հիմնավորող որևէ պարզաբանում ԷՆ-ն չի ներկայացրել:

Ծախսային արդյունավետության սկզբունքի չպահպանում

• 27.03.2020-31.05.2020թթ. ընկած ժամանակահատվածում ԷՆ-ն մեկուսացման գործընթացն իրականացրել է հյուրանոցներն ամբողջությամբ վարձակալելով՝ առանց հաշվի առնելու, թե որքան է եղել մեկուսացման իրական կարիքը և մեկուսացված անձանց փաստացի թվաքանակը: Այդ եղանակով, ԷՆ-ն հյուրանոցային ծառայություններ մատուցած կազմակերպություններին է վճարել 906,703.6 հազ. դրամ գումար, այդ թվում՝ վճարելով չօգտագործված սենյակների դիմաց:

Նպատակային արդյունավետության սկզբունքի չպահպանում

• Հարկային հաշիվներով վճարված սննդի և հյուրանոցային ծառայություններ ստացող անձանց թվաքանակի վերաբերյալ ԷՆ-ի տվյալներում՝ մեկուսացված

անձանց թվաքանակի վերաբերյալ ԱՆ-ից ստացված տվյալների համեմատ արձանագրվել են 187,934.3 հազ. դրամի չափով 10,225 հատ հյուրանոցային ծառայությունների և 23,385 հատ սննդի ծառայությունների շեղումներ: Այսինքն՝ ԷՆ-ն վճարել է հյուրանոցային և սննդի ծառայությունների դիմաց ավելի շատ, քան ԱՆ-ի տվյալների համաձայն, տվյալ մեկուսացման վայրում մեկուսացված անձինք են եղել:

• ԷՆ-ի կողմից ֆինանսավորվել են նաև բուժանձնակազմի և կորոնավիրուսային հիվանդությամբ ախտորոշված բուժառուների կեցության ծախսերը՝ 2,659,481.5 հազ. դրամի չափով:

Համաձայն հաշվեքննության համառոտ եզրակացության՝ **արձանագրվել են տնտեսական, ինչպես նաև ծախսային և նպատակային արդյունավետության սկզբունքների չպահպանման դեպքեր:**

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործընթացի համապատասխանության և կատարողականի հաշվեքննություն

Հաշվեքննության օբյեկտը՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2019թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը:

Հաշվեքննության առարկան ՀԾԿՀ-ում հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործընթացն է:

ՀԾԿՀ-ի 2019 թվականի տարեկան պլանը կազմել է 798,863.1 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 813,842.3 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 792,512.1 հազ. դրամ: ՀԾԿՀ-ի 2020 թվականի տարեկան պլանը կազմել է 842,907.7 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 851,793.7 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 830,067.5 հազ. դրամ:

Հատկանշական է, որ 2019 թվականի համեմատ 2020 թվականի նախատեսված ծախսերը հիմնականում ավելացել են՝ պայմանավորված աշխատողների վարձատրությանը և պարգևավճարին ուղղվող ծախսերի աճով (39,716.1 հազ. դրամով):

Ուշադրության են արժանի համապատասխանության և կատարողականի հաշվեքննությունների մեթոդաբանությամբ սահմանված սկզբունքների չպահպանման հետևյալ դեպքերը.

Նպատակային արդյունավետության սկզբունքի չպահպանում

• ՀԾԿՀ-ի գործունեության կարևոր ուղղություններից մեկը խմելու ջրի սակագնի նվազմանն ուղղված՝ ջրամատակարարման համակարգում մեծածավալ կորուստների վերհանումն է: Այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ տարեկան միջին հաշվով բացահայտվում է ընդամենը 1-2 մլն խորանարդ մետր չհաշվառված, բայց փաստացի մատակարարվող խմելու ջուր, ներկայիս տեմպերի պահպանման դեպքում կորստի հայտնաբերման նպատակային մեծությանը (400 մլն խորանարդ մետր) հասնելու համար կպահանջվի առնվազն 200 տարի:

• ՀԾԿՀ-ն չի ապահովել, որ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագները սահմանվեն կախված դրանց ֆիզիկական ծավալից և մաքրման աշխատանքների մեծությունից:

Ծախսային արդյունավետության սկզբունքի չպահպանում

• Հանձնաժողովի տարեկան պլանով նախատեսված՝ հանրային ծառայությունների կարգավորման ոլորտներից մեկը՝ ջերմամատակարարման համակարգը չի կայացել, սակայն դրա հետ կապված բոլոր ծախսերն իրականացվել են: Մինչդեռ հանրապետությունում ջերմային էներգիայի մատակարարման որևէ համակարգ չի գործում:

Համաձայն հաշվեքննության համառոտ եզրակացության՝ **չեն պահպանվել ծախսային և նպատակային արդյունավետության սկզբունքները**, իսկ համապատասխանության հաշվեքննության արդյունքում տրամադրվել է «**ոչ լիարժեք եզրահանգում**» կարծիք:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության կողմից կենսաթոշակառուների ցանկերի ձևավորման, կենսաթոշակների նշանակման և կենսաթոշակների վճարման իրականացման նկատմամբ կատարողականի հաշվեքննություն

Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն: Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2019թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը:

Հաշվեքննության առարկան ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության ծառայության (ՍԱԾ) կողմից կենսաթոշակառուների ցանկերի ձևավորման, կենսաթոշակների նշանակման և վճարման գործընթացներն են:

Ուշադրության են արժանի կատարողականի հաշվեքննությունների

մեթոդաբանությամբ սահմանված սկզբունքների չպահպանման հետևյալ դեպքերը.

Տնտեսման արդյունավետության սկզբունքի չպահպանում

- «Հայփոստ» ՓԲԸ-ին մեկ կենսաթոշակի հաշվով վճարվել է 386.9 ՀՀ դրամ, իսկ առևտրային բանկերին՝ 30 դրամ: Արդյունքում վճարումների իրականացման գործընթացն ապահովելու նպատակով «Հայփոստ» ՓԲԸ-ին առևտրային բանկերի համեմատ վճարվել է 1,185,469.4 հազ. դրամով ավելի գումար: Մինչդեռ, 2019 թվականի ընթացքում առևտրային բանկերի միջոցով բաշխված գումարը «Հայփոստի» միջոցով բաշխված գումարին գերազանցել է 8,357,852.8 հազ. դրամով:

Նպատակային արդյունավետության սկզբունքի չպահպանում

- Կենսաթոշակ նշանակելու համար աշխատանքային ստաժը հաշվարկելու գործող կանոնների համաձայն՝ կենսաթոշակի չափը հաշվարկելիս (վերահաշվարկելիս) աշխատանքային ստաժի հանրագումարի մեջ մինչև 180 օր ժամանակահատվածը չի հաշվառվում, իսկ դրանից ավելի ժամանակահատվածը հաշվառվում է որպես մեկ տարվա ստաժ: Մասնավորապես, օրինակ՝ 20-40 տարվա աշխատանքային ստաժ ունեցողների խմբի համար վերջին ոչ լրիվ տարում 181 օր աշխատանքային ստաժ ունեցողների կենսաթոշակի գումարը 800-1200 դրամով գերազանցում է նույնքան տարիների, բայց վերջին ոչ լրիվ տարում 179 օր աշխատանքային ստաժ ունեցողներին: Ելնելով այս հանգամանքից, ՀՊ-ն առաջարկում է, որպեսզի աշխատանքային ստաժի հաշվառումն իրականացվի ոչ թե սանդղակով, այլ՝ հստակ հաշվի առնելով փաստացի աշխատանքային ստաժը (ամիսներով և օրերով):

Ծախսային արդյունավետության սկզբունքի չպահպանում

- ՀՀ 2019-2021թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով Սոցիալական ապահովության պետական ծառայության ներքին պորտալի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով յուրաքանչյուր տարվա համար նախատեսվում է 22,000,000 դրամ: Այս ծառայությունները ֆինանսավորման հայտի հիման վրա ներառվել են 2019 թվականի տարեկան բյուջեում և կազմակերպված մրցույթի արդյունքում կնքվել է պայմանագիր (14,550.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով), սակայն, փաստացի տվյալ ծառայությունների մատուցումը պատվիրատուի կողմից համարվել է տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին չհամապատասխանող և վճարում չի իրականացվել:

Համաձայն հաշվեքննության համառոտ եզրակացության՝ **չեն պահպանվել**

տնտեսման, ինչպես նաև նպատակային և ծախսային արդյունավետության սկզբունքները:

Ֆինանսների նախարարության կողմից հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի (ՀՀՀՀՍ) ներդրման գործընթացի իրականացման նկատմամբ կատարողականի հաշվեքննություն

Հաշվեքննության օբյեկտը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2016թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. հունիսի 1-ը:

Հաշվեքննության առարկան ՀՀՀՀՍ ներդրման գործընթացն է:

Ընդհանրապես, հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի բարեփոխումները ՀՀ-ում սկսվել են դեռևս 2003 թվականին:

Ուշադրության են արժանի կատարողականի հաշվեքննությունների մեթոդաբանությամբ սահմանված սկզբունքների չպահպանման հետևյալ դեպքերը.

Նպատակային արդյունավետության սկզբունքի չպահպանում

- ՀՀՀՀՍ եռամսկարգակ (ՀՀ-ն՝ որպես մեկ միասնական միավոր, վերահսկող կազմակերպություններ, հանրային հատվածի առանձին կազմակերպություններ) ներդրման գործընթացը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ ավարտված չի եղել:

- 2017 թվականից մինչև 2021 թվականի մարտի 28-ը վերահսկող կազմակերպությունների կողմից «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով նախատեսված համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն պատրաստվել և չեն ներկայացվել:

- ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես լիազոր մարմին, 2019 թվականի հաշվետու ժամանակահատվածի համար մեկ միասնական միավորի ֆինանսական հաշվետվություններ չի կազմել և չի հրապարակել, ավելին՝ մինչև 2021 թվականի մարտի 28-ը նախարարությունը ՀՀՀՀՍ ներդրման գործընթացի մշտադիտարկման, ինչպես նաև մեթոդական աջակցության տրամադրման համար օրենքով սահմանված իրավասություններ չի ունեցել:

Համաձայն հաշվեքննության համառոտ եզրակացության՝ **չի պահպանվել նպատակային արդյունավետության սկզբունքը:**

ՀՊ-ի համագործակցությունը ՀՀ գլխավոր դատախազության հետ

Հ/Հ	Թեմա	Հաշվե- քննությունն ընդգրկող ժամանա- կաշրջանը	Ծանոթություն
I. ՀՊ-ն տրամադրել է ՀՀ գլխավոր դատախազությանը՝ իր որոշմամբ			
1	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն («Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ)	01.01.2019- 31.12.2019թթ.	05.07.2021թ. հարուցվել է քրեական գործ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 4,456.19 հազ. դրամ:
2	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն («Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ)	01.01.2019- 31.12.2019թթ.	28.07.2021թ. հարուցվել է քրեական գործ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 4,800.00 հազ. դրամ:
3	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	01.01.2020- 31.12.2020թթ.	09.11.2021թ. հարուցվել է քրեական գործ, գտնվում է նախաքննության փուլում:
4	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն («Երևանի Մ. Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ)	01.01.2019- 31.12.2019թթ.	25.09.2021 թվականին հարուցվել է քրեական գործ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 1,389.0 հազ. դրամ:
5	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն («Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ)	01.01.2020- 31.12.2020թթ.	Ուսումնասիրության փուլում է
6	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն (անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի ձեռքբերում)	01.01.2020- 31.12.2020թթ.	Ուսումնասիրության փուլում է
7	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	01.01.2021- 30.09.2021թթ.	Ուսումնասիրության փուլում է
8	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե	01.01.2018- 31.12.2020թթ.	Ուսումնասիրության փուլում է
II. ՀՊ-ն տրամադրել է ՀՀ գլխավոր դատախազության պահանջով			
1	Դեղատնային գործունեության լիցենզավորման գործընթաց	01.01.2017- 30.09.2018թթ.	20.02.2021թ. հարուցվել է քրեական գործ, գտնվում է նախաքննության փուլում:

2	ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ	01.01.2017- 30.09.2018թթ.	22.04.2021թ. հարուցվել է քրեական գործ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 110,555.6 հազ. դրամ:
3	ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության դրամաշնորհային ծրագիր	01.01.2017- 31.12.2017թթ.	01.10.2021թ. հարուցվել է քրեական գործ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 117,147.0 հազ. դրամ:
4	ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն	01.01.2018- 30.06.2019թթ.	17.03.2022թ. հարուցվել է քրեական գործ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 153,861.0 հազ. դրամ:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: